

Կ-660-17.06.2020-ՊԻ-011

**ՕՐԵՆՔԸ**  
**«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ**  
**ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ**  
**ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն մասի պահանջը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության, բացառությամբ եթե առկա են եղել սույն հոդվածի 6.1.-ին մասով սահմանված հիմքերը: Նման գործարքն առոչինչ է:

Գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման դիմում կարող է ներկայացնել այդ գործարքի կողմերից յուրաքանչյուրը:»

**Հոդված 2.** Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1.-ին մասով՝

«6.1. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետը բաց թողնելը հարգելի է համարվում, եթե դիմողը հիմնավորում է իրենից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը, եթե

1) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք (անհաղթահարելի ուժ)։

2) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել դիմողի այնպիսի հիվանդությունը, որը խոչընդոտել է նրա իրավունքի իրացմանը։

3) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել դիմողի կողմից զինված ուժերի կազմում ռազմական գործողություններին կամ մարտական առաջադրանքների կամ այլ ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու հանգամանքը։

4) գործարքի կողմը գործարքը կնքելուց հետո ճանաչվել է անգործունակ և ժամկետի վերականգնման համար դիմել է օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալը։

5) գործարքի կողմը մահացել է, և ժամկետի վերականգնման համար դիմել է իրավահաջորդը։

6) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել գործարքի կողմին անհայտ բացակայող ճանաչելու հիմքի ի հայտ գալը, և անհայտ բացակայող ճանաչվելուց հետո ժամկետի վերականգնման համար դիմել է նրա գույքի հավատարմագրային կառավարիչը։

7) մահացել են անչափահաս քաղաքացու օրինական ներկայացուցիչները, և նա չի ունեցել օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալ կամ հոգաբարձու։

Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը որոշում է ընդունում ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ, եթե նշված հիմքերը ծագել կամ առկա են եղել սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված երեսնօրյա ժամկետում:

Պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու վերջնաժամկետ է ժամկետը բաց թողնելու պատճառը վերանալու օրվանից սկսած 15 աշխատանքային օրը, իսկ գործարքի կողմ չհանդիսացող անձանց դեպքում՝ այն օրվանից սկսած 15 աշխատանքային օրը, երբ իմացել էին կամ պարտավոր էին իմանալ այդ գործարքի մասին:

Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու դիմումը քննարկում և լուծում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով»:

### **Հոդված 3.** Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝

#### 1) 4-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«4) նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա պետական գրանցման համար դիմումը ներկայացվել է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ, եթե պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինն այդ ժամկետի բացթողումը հարգելի չի համարել սույն օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասով սահմանված հիմքերով, կամ պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմումը ներկայացվել է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասով սահմանված 15-օրյա ժամկետի խախտմամբ.»

#### 2) 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«5) այն անհատական իրավական ակտը, որով տրամադրվում է իրավունքը կամ կիրառվում է իրավունքի սահմանափակումը, ընդունվել է ոչ իրավասու վարչական մարմնի կողմից.»

**Հոդված 4.** Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը «ժամկետը» բառից հետո լրացնել «, բացառությամբ եթե ներկայացվել է պարտապանի և գրավատուի՝ օրենքով սահմանված կարգով տրված գրավոր համաձայնությունը մինչև երկամսյա ժամկետի լրանալը գրավի առարկան բռնագանձելու վերաբերյալ:» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասը «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բառացառությամբ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասով նախատեսված պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու դեպքի,» բառերով:

#### **Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. 2019 թվականի հունիսի 1-ից հետո կնքված և նոտարական վավերացում ստացած, ինչպես նաև 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված երեսնօրյա ժամկետը չլրացած անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեսնօրյա ժամկետում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետական գրանցման ներկայացնելու համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված երեսնօրյա ժամկետը բաց թողնելը կարող է հարգելի համարվել սույն օրենքով սահմանված կարգով, եթե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասում նշված հիմքերը ծագել կամ առկա են եղել նշված երեսնօրյա ժամկետում:

## ՏԵՂԵԿԱՆՔ

### ՕՐԵՆՔԸ

«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ~~ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ~~ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ~~Հայաստանի Հանրապետության~~ 1999 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-295 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 24-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն ոչ ուշ, քան այդ գործարքների նոտարական վավերացման օրվանից սկսած՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն մասի պահանջը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության, բացառությամբ եթե առկա են եղել սույն հոդվածի 6.1.-ին մասով սահմանված հիմքերը: Նման գործարքն առոչինչ է:

Գործարքից ծագող իրավունքների պետական գրանցման դիմում կարող է ներկայացնել այդ գործարքի կողմերից յուրաքանչյուրը:»

**Հոդված 2.** Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1.-ին մասով՝

«6.1. Սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետը բաց թողնելը ~~կարող է~~ հարգելի է համարվում է, եթե դիմողը հիմնավորում է իրենից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) ժամկետը բաց թողնելու հանգամանքը:

Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը դիմումի հիման վրա հարգելի է համարում ժամկետը բաց թողնելը, եթե

8) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել արտակարգ և տվյալ պայմաններում անկանխելի հանգամանք (անհաղթահարելի ուժ)։

9) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել դիմողի այնպիսի հիվանդությունը, որը խոչընդոտել է նրա իրավունքի իրացմանը։

10) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել դիմողի կողմից զինված ուժերի կազմում ռազմական գործողություններին կամ մարտական առաջադրանքների կամ այլ ծառայողական պարտականությունների կատարմանը ներգրավված լինելու հանգամանքը։

11) գործարքի կողմը գործարքը կնքելուց հետո ճանաչվել է անգործունակ և ժամկետի վերականգնման համար դիմել է օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալը։

12) գործարքի կողմը մահացել է, և ժամկետի վերականգնման համար դիմել է իրավահաջորդը։

13) պետական գրանցման համար դիմումը նշված ժամկետում ներկայացնելու արգելք է հանդիսացել գործարքի կողմին անհայտ բացակայող ճանաչելու հիմքի ի հայտ գալը, և անհայտ բացակայող ճանաչվելուց հետո ժամկետի վերականգնման համար դիմել է նրա գույքի հավատարմագրային կառավարիչը։

14) մահացել են անչափահաս քաղաքացու օրինական ներկայացուցիչները, և նա չի ունեցել օրենքով սահմանված կարգով նշանակված խնամակալ կամ հոգաբարձու։

Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը որոշում է ընդունում ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ, եթե նշված հիմքերը ծագել կամ առկա են եղել սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված երեսնօրյա ժամկետում։

Պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու վերջնաժամկետ է ժամկետը բաց թողնելու պատճառը վերանալու օրվանից սկսած 15 աշխատանքային օրը, իսկ գործարքի կողմ չհանդիսացող անձանց դեպքում՝ այն օրվանից սկսած 15 աշխատանքային օրը, երբ իմացել էին կամ պարտավոր էին իմանալ այդ գործարքի մասին:

Պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինը պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու դիմումը քննարկում և լուծում է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով»:

**Հոդված 3.** Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի՝

1) 4-րդ կետը շարադրել ~~հետևյալ նոր~~ խմբագրությամբ՝

«4) նոտարական վավերացում ստացած գործարքի հիման վրա պետական գրանցման համար դիմումը ներկայացվել է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված 30-օրյա ժամկետի խախտմամբ, եթե պետական գրանցումն իրականացնող լիազոր մարմինն այդ ժամկետի բացթողումը հարգելի չի համարել սույն օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասով սահմանված հիմքերով, կամ պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմումը ներկայացվել է սույն օրենքի 24-րդ հոդվածի 6.1-ին մասով սահմանված 15-օրյա ժամկետի խախտմամբ.»

2) 5-րդ կետը շարադրել ~~հետևյալ նոր~~ խմբագրությամբ՝

«5) այն անհատական իրավական ակտը, որով տրամադրվում է իրավունքը կամ կիրառվում է իրավունքի սահմանափակումը, ~~կայացվել րնդունվել~~ է ոչ իրավասու վարչական մարմնի կողմից.»:

**Հոդված 4.** Օրենքի 40-րդ հոդվածի 3-րդ մասը «ժամկետը» բառից հետո լրացնել «, բացառությամբ եթե ներկայացվել է պարտապանի և գրավատուի՝

օրենքով սահմանված կարգով տրված գրավոր համաձայնությունը մինչև երկամսյա ժամկետի լրանալը գրավի առարկան բռնագանձելու վերաբերյալ:» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 74-րդ հոդվածի 2-րդ մասը «պետական գրանցումը» բառերից հետո լրացնել «, բառացառությամբ սույն օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասով նախատեսված պետական գրանցման և ժամկետը բաց թողնելը հարգելի համարելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու դեպքի,» բառերով:

### **Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. 2019 թվականի հունիսի 1-ից հետո կնքված և նոտարական վավերացում ստացած, ինչպես նաև 2019 թվականի հունիսի 1-ի դրությամբ իրավունքները պետական գրանցման ներկայացնելու համար «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված երեսնօրյա ժամկետը չլրացած անշարժ գույքի նկատմամբ իրավունքների ծագմանը, փոփոխմանը, փոխանցմանն ուղղված գործարքներից (բացառությամբ միակողմ գործարքների) ծագող իրավունքները պետք է պետական գրանցման ներկայացվեն սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երեսնօրյա ժամկետում:

3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո պետական գրանցման ներկայացնելու համար սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված երեսնօրյա ժամկետը բաց թողնելը կարող է հարգելի համարվել սույն օրենքով սահմանված կարգով, եթե «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 24-րդ հոդվածի 6.1.-ին մասում նշված հիմքերը ծագել կամ առկա են եղել նշված երեսնօրյա ժամկետում:



**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ» ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

	Առաջարկի փոփոխության, լրացման) հեղինակը	Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական գեկուցողի) եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
	<b>ՀՀ Կառավարություն</b>	«Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր, 1-ին հոդված, «Նոտարիատի	1. Առաջարկում ենք «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ նաեւ՝ Նախագիծ) վերնագրից հանել երկրորդ, իսկ Նախագծի 1-ին հոդվածից օրենքի անվանումից հետո գրված «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք	<b>Ընդունվել է.</b> Կատարվել են համապատասխան փոփոխություններ	<b>Ընդունվել է.</b>

		<p>մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր եւ 1-ին հոդված, ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերնագիր</p>	<p>ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: Նույն առաջարկը վերաբերելի ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին եւ 1-ին հոդվածին, ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրին:</p>		
		<p>««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ, վերնագիր</p>	<p>2. ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագրի «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառն առաջարկում ենք փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	<p><b>Ընդունվել է.</b></p>

			<p>օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծում կատարվում են մեկից ավելի փոփոխություններ:</p>		
		<p>««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված</p>	<p>3. Նախագծի 2-րդ հոդվածով Օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 6.1-ին մասով սահմանվում է «Սույն հոդվածի 6-րդ մասում նշված ժամկետը բաց թողնելը <u>կարող է</u> հարգելի համարվել, եթե դիմողը հիմնավորում է իրենից անկախ պատճառներով (նրա մեղքի բացակայությամբ) ժամկետը բաց թողնելու հանգամանքը»: Կարծում ենք նպատակահարմար է «բաց թողնելը կարող է հարգելի համարվել» ձեակերպումը փոխարինել «բաց թողնելը հարգելի է համարվում» ձեակերպմամբ:</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	<p><b>Ընդունվել է.</b></p>
		<p>««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում</p>	<p>4. Նախագծի 3-րդ հոդվածում «հետկյալ» բառը փոխարինել «նոր» բառով: Բացի այդ, Նախագծի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող Օրենքի 30-րդ հոդվածի 1-</p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել են համապատասխան փոփոխություններ</p>	<p><b>Ընդունվել է.</b></p>

		<p>փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված</p>	<p>ին մասի 5-րդ կետով նախատեսված «այն անհատական իրավական ակտը, որով տրամադրվում է իրավունքը կամ կիրառվում է իրավունքի սահմանափակումը, <u>կայացվել</u> է ոչ իրավասու վարչական մարմնի կողմից.» ձեակերպումն առաջարկում ենք փոխարինել «այն անհատական իրավական ակտը, որով տրամադրվում է իրավունքը կամ կիրառվում է իրավունքի սահմանափակումը, <u>ընդունվել</u> է ոչ իրավասու վարչական մարմնի կողմից.» ձեակերպմամբ՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքում կիրառվող տերմինները եւ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը:</p>		
		<p>««Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում</p>	<p>5. Առաջարկում ենք 6-րդ հոդվածի վերջին պարբերությունը համարակալել՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ մասը՝ «Օրենսդրական <i>ակտերում</i></p>	<p><b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>	<p><b>Ընդունվել է.</b></p>

		փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 6-րդ հոդված	<i>հոդվածները բաժանվում են «մասեր» կոչվող միայն համարակալված պարբերությունների »:</i>		
		««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	6. Առաջարկում ենք ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող «Նոտարիատի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 22.1-ին կետի համարը տեքստից բաժանել «)» փակագծով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը՝ «Հոդվածների եւ մասերի համարները տեքստից բաժանվում են միջակետերով, իսկ հոդվածների կետերի համարները՝ փակագծերով »:	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն	<b>Ընդունվել է.</b>
		««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ	7. ««Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ	<b>Ընդունվել է.</b> Կատարվել է համապատասխան փոփոխություն	<b>Ընդունվել է.</b>

		կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդված	հոդվածում կատարվում է հղում «Օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասը», մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Հղումները կատարվում են հստակ եւ ուղղակի », ինչպես նաեւ նորմատիվ իրավական ակտին կամ հոդվածին հղում կատարելիս պետք է նշել նաեւ նորմատիվ իրավական ակտի անվանումը, հետեւաբար, առաջարկում ենք կա՛մ ամբողջությամբ նշել «Նոտարատի մասին» օրենքի անվանումը, կա՛մ 1-ին հոդվածում լրիվ անվանումը կիրառելուց հետո փակագծերում նշել կրճատ տարբերակը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասը:		
--	--	---	--	--	--